



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 127-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 388-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 5-րդ մասի, 26-րդ հոդվածի 1-ին մասի և 388-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 15-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2019 թվականի օգոստոսի 30-ի «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» ԵԴ/18182/02/19 քաղաքացիական գործով որոշումը:

Վերոհիշյալ որոշմամբ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 5-րդ մասի, 26-րդ հոդվածի 1-ին մասի և 388-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը, այդ թվում նաև՝ իրավունքի բացի մասով:

2. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի

այն պահանջը, համաձայն որի՝ դատարանը վարույթը կասեցնելու դեպքում հիշյալ հոդվածով նախատեսված դիմումը կարող է ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հարկ է նշել նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր իրավակարգավորումները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարան դիմող բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ դատարանների համար: Օրենքի հիշյալ գլխով կանոնակարգվում են նաև գործի քննությունը մերժելու (29-րդ հոդված) հետ կապված հարցերը:

Օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 2019 թվականի օգոստոսի 30-ի «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման մեջ նշել է, որ ԵԴ/18182/02/19 քաղաքացիական գործի վարույթը կասեցրել է **2019 թվականի օգոստոսի 30-ին**: Սակայն, Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 2019 թվականի օգոստոսի 30-ի «ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը Սահմանադրական դատարան է ներկայացրել **2019 թվականի հոկտեմբերի 14-ին**: Այսինքն, ակնհայտ է, որ դիմողը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով **սահմանված եռօրյա ժամկետը** և, հետևաբար, իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոշարադրյալից, ղեկավարվելով Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 5-րդ մասի, 26-րդ հոդվածի 1-ին մասի և 388-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**



Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

29 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴԱՈ-117